լումէ նոցա յարգանքը։ Միայն յարգելի ուսուցչին կարող են ծնողքը հաւատ ընծայել։ Եւ ուսուցչին անհրաժեշտ է սեպհականացնել իւրեան ծընողաց յարգանքը և հաւատը։ Այդ նշանաւոր է մանաւանդ նորա համար, որ դէպի ուսուցիչը ունեցած ծնողաց յարգանքը և հաւատը արձագանք է գտնում նաև երեխայոց սրտի մէջ։ Երեխայքը նկատում են, թէ ինչպէս են վարւում իւրեանց ծնողքը կամ ազգականքը ուսուցչի հետ, ի՞նչ են խօսում նորա մասին և իրանք ևս աշխատումեն հետևել նոցա օրինակին և վարւել ուսուցչի հետ նոցա նման։ Միակ միջոցը յարգւած տեսնել իւրեան աշակերտաց ծնողներից կամ նոցա ազգականներից՝ կայանումէ ուսուցչի բարի հակումից և եռանդուն ու պատւաւոր գործունէութիւնից յօգուտ մանկանց։

(Աշտարա—Նախ—է)։ Ա. Զաքարեան։

ՏՓԽԻՍՈՒ ՆՈՐԱՇԷՆ ԵԿԵՂԵՑԻՈՑ ՍՈՒՐԲ ՄԱՐԻԱՄԵԱՆ ՕՐԻՈՐԴԱՑ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԸ.

Այս տարւայ «Մեղու» լրագրի 23 և 37 համարների մէջ տպած էր մի քանի աւել պակաս խօսքեր վերոյիշեալ օրիորդաց ուսումնարանի մասին։

Թէպէտ ուշադրութիւն ևս դարձնելու չէր ասածների վերայ, գիտենալով թէ՝ որ աղբիւրից է այս ծագում, բայց այնու ամենայնիւ հարկաւոր ենք համարում պատասխանել, որպէս զի միամիտ անձինք, ինչ որ վերաբերելու է գրողներին, չվերաբերեն միւսներին։

Յօդուածագիրը բոլոր իւր մաղձը թափումէ յիշեալ ուսումնարանի հոգաբարձուաց վերայ և վերաբերելով բոլոր դպրոցի պակասութիւնը նոցա յետադիմութեանն ու անհոգութեանը և մանաւանդ իմ եսական կառավարութեանը, ասելով որ՝ ես օտարազգի վարժուհի ունենալով, մինչ անգամ ուսման այբուբենը չգիտեմ, առաջարկումէ նոր ընտրութիւն հոգաբարձուաց։

Եթէ պ. յօդուածագիրը չկամեցաւ ծածկել մեր ազգանունը, ուրեմն մեզ աւելի իրաւունք կայ չծածկել նորա անունը։ Մեր կարծիքով այս յօդուածագիրը պէտք է լինի պ. Յարոն և նորա համախոհ Բ. Ղ. . . և Մ. Բ. . . և մեզ յայտնի մի թոյլ էակ, որի անունը և ազգանունը, ինչպէս և առաջինների ամբողջութեամբ, կըխնդրենք թոյլ տալ մեզ չյիշել, պահելով յարգանք ու պատիւ դէպի սոցա—մանաւանդ դէպի մեր գեղեցիկ սեռը։

Այս յօդուածը վերաբերում եմ սոցա նորա համար, որ առաջինը, երբ մեր վարչութիւնը այս տարւայ Յունվարի 31ին կայացրած օրագրաւ արձակեց նորան տեսչի պաշտօնակատարութիւնից նորա թոյլութեան, անհոգութեան և աւելորդ դասական փողերի վեր առնելու համար բացի իւրան հասանելի ամսական 30 ռուբլուց տեսչութեան համար, այն ինչ

շատ անգամ բացակայ է եղել, շատ անգամ տօներ էլ են եղել, ինչպէս
օրինակ Դեկտեմբեր և Յունվար ամիսներում*), և քանի մի անգամ էլ
«էն. էն.» բառերով ծախսեր է հանել, թէ և այս վերջինը եղել է
փոքր քանակութեամբ**), բացարձակ առաց. «կտեսնէք, թէ ինչ կըգ-
րեմ լրագիրներումը ձեզ վերայ»***), իսկ միւսները խրոխտալով դուրս
գնացին նիստից, երբ Հոգաբարձութիւնը բացասեց նոցա միջնորդութիւնը
նորա մասին. Ինչ որ կըպատկանի Թոյլ էակին, որն որ միայն ձեռագոր-
ծի վերայ նայեցողութեան համար էր հրաւիրուած, այն ևս իրա խնդրա-
նօք—նա արդէն քանիցս անգամ ժողովքներ էր կազմել իրա տանը ուս-
ման մասին առանց ձայն տալու հոգաբարձուաց և արդէն իրան մէջ որո-
շել էր ուսումնարանը միանգամայն ձեռք գցել և կառավարել վերոյիշեալ
երկու անձանց հոգաբարձութեամբ, որի համար իցէ և ինքն պ. Յարոն
դառել էր գործիք, որպէս զի, թլացնելով դպրոցի ուսման ընթացքը, ի-
րաւունք ստանան յետոյ խնդրել նոր ընտրութիւն հոգաբարձուաց. Այո՛,
այս Թոյլ պատւական ասացեալ տիկին էակն էր, որ պարագլուխ հան-
դիսացաւ բոլոր խառնակութեանց.

Հոգաբարձութիւնը, հասկանալով այս ամէնը և տեսնելով Թոյլ դա-
սատուութիւնը, արձակեց ոչ թէ միայն Յարոյին, որն որ ընդունուած էր
միայն ժամանակաւորապէս մինչի մի լաւ տեսուչ գտնելը, այլ և նորա,
կարծես, նոյն իսկ նպատակաւ բերած ուսուցիչ Նիկողայոս Չիգլինեանցին,
որ նոյնպէս Թոյլ և անընդունակ գտնւեցաւ իրա պաշտօնի մէջ. Ուրա-
խութեամբ ընդունեց վարչութիւնը և հրաժարումն յիշեալ Թոյլ էակի,
որն որ ձեռագործի մէջ երեք ամսումը, ինչպէս երևում է այս տարւայ
Փետրվար 14 կայացած օրագրից, վնաս տուեց դպրոցին մինչ 74 ռ. 90 կ.
բացի Յարոյի հինգ ամսւայ մէջ տուած 44 ռ. 85 կ. վնասից, որ ընդ ամէնը
կանէ 119 ռ. 75 կ. Վարչութիւնը, խոստովանում եմ, մեղաւոր է, որ
մինչ այս աստիճան վստահացաւ Յարոյի վերայ և չգիտենալով այսպիսի
ներքին խորամանկութիւնը, յանձնեցաւ նորա կառավարութեանը.

Այսպիսի իրողութիւնից յետոյ Հոգաբարձութեանը, ի հարկէ, ոչինչ
չէր մնում բացի նորանից, որ ինչպէս և լինի նորից առաջւայ բարեկար-
գութեանը հասցնէ դպրոցը և այն պատճառը, որ նա անցեալ Յունվարի
31 օրագրաւ յանձնեց ինձ կառավարել ուսումնարանը, որի բոլոր փոփո-

---

(*) Տեսեան 1879 ամի Սեպտեմբերի 28. Հոկտեմբերի 30. Նոյեմբերի 31. Դեկ-
տեմբերի 29 եւ 1880 ամի Յունվարի 30-ին.

(**) Տեսեան 1879 ամի Սեպտեմբերի 10 եւ 1880 ամի Յունվարի 5.

(***) Այս յօդուածը ոչ Մեղուի եւ ոչ թէ Մշակի խմբագիրները չընդունեցան տպել,
երեւի ափսոսալով յանցաւորների անուններին, բայց մենք լռելու էլ ոչինչ չունենք,
որովհետեւ նոքա, ինչպէս երեւում է անցեալ Օգոստոսի «Արարատ» ամսագրից, չեն
դադարում իրանց զրպարտութիւններից ուսումնարանիս Հոգաբարձութեան մասին, չը-
նայելով իրանց մեղաւորութեանը.

խութիւնները լինում էին նախնեաց գիտութեամբ հոգաբարձուաց, որպէս կվկային նոյնպէս և կայացած օրագիրները այն մասին*)։ Ուրեմն եթէ մի կարգադրութիւն արել եմ, այն կատարել եմ ես իբր հերթական հոգաբարձու և ոչ թէ իմ եսականութեամբս, ինչպէս անտեղի պնդում է յօդուածագիրը. թէ մինչ որ աստիճան հասաւ այս բարեկարգութիւնը աշխատասիրութեամբ նոր տեսչի պ. Անդրէաս Զաշիտեանցի այս կարճ ժամանակում այսինքն փետրվար ամսից, երբ որ (ինչպէս յայտնեց վերոյիշեալ ուսուցիչ Զիգեանեանցը անցեալ Յունվար ամսի վերջին մասնաւոր հարցաքննութեան ժամանակը) երկրորդ այնէ բարձր դասատան օրիորդները մինչ անգամ հարիւրից աւելի թուանշան գրել ուսած չէին հինգ ամսում, այսինքն մոռացել էին այն ևս, ինչ որ գիտէին, կարող է վկայել այժմեան յառաջադիմութիւնը։

Նոյնպէս թէ օրպիսի յառաջադիմութիւն է ունեցել այս դպրոցը առաջուայ ժամանակը, կարող են վկայել մի կողմանէ այն, որ հանգուցեալ ուսուցչուհի օր. Լ. Անգլիցեանի օրերը ժողովուրդը հիացած մնաց ալէգրայի այսինքն վիճակի խաղարկութեան ժամանակը օրիորդների կարերից, որոնք Գայիանէի ուսումնարանի ձեռագործներից, չեմ ամաչի ասել, շատ ու շատ գերազանց գտնուեցան, իսկ միւս կողմանէ այն, որ մեր ուսումնարանի երկրորդ դասատունից դուրս գնացած օրիորդներից շատերը մնում էին Գայիանեան դպրոցի երրորդ դասատունը, թէև այժմ նորա վիճակը աւելի բարելաւացած է անվարձ դասատուութեամբ ուսուցչաց, որոնք ապահովուած են վարձնական դասատուութեամբ Ներսիսեան դպրոցումը։ Ուստի եթէ նոյն իսկ Վարչութիւնը իրա հոգացողութեամբ կարողացաւ հասցնել դպրոցը այսպիսի նախանձելի վիճակին, ուրեմն ինչ եղաւ, որ սա վերջին ժամանակը — այն ևս կարճ միջոցում, այսպիսի մի անսպասելի հարուած ստացաւ իրա ընթացքում։ Հասկանալի է, որ սորա պատճառը պէտք է որոնել ոչ թէ հոգաբարձուաց մէջ, ինչպէս գրել են Մեղուի մէջ, այլ պաշտօնակատար տեսչի և իրա համախոհ ուսուցչաց և մարդկանց մէջ, որոնք, անբաւական մնալով իրանց լարած որոգայթների թելերի քանդելուց, այժմ աւել պակաս խօսում են և գրում։ Ես և ինձ հետ իմ ընկերակից հոգաբարձուքը չեն կարող չյիշել առաջիկայ լաւ տեսուչներից մի քանիսին — մանաւանդ մեր միշտ յարգելի Յովհաննէս Զիգեանեանցին, որին շատ ու շատ ափսոսալով թողինք Օնանեան ուսումնարանի տեսուչ լինելու, միջնորդելով այս մասին մինչ անգամ և մեր կողմանէ մեր գովասանութեամբ, կամենալով աւելորդութեամբ ոռճկի երախտագետ լինել դէպի նորան։ Չեմ կարող չը յիշել գոհունակութեամբ և պ. Բարսեղ Ղանդուլարեանցի բաւականին լաւ տեսչութիւնը, թէ և

(*) 1830 ամի փետրվարի 2, 3, 13, 14, 15, 16, 18 ու 21։ Մարտի 5, 11, 14, 15, 20 ու 31։ Մայիսի 1-ից հերթական կարգուել է հոգաբարձու Զաքարեայ Թամամշեանցը։

այժմ իրա բարերարութեամբ և թոյլութեամբ թեքել է իրա երեսը դէպի Բարոններին. Սա թողեց իրա պաշտօնը իրա առևտրական գործի պատճառաւ.

Այժմ տեսնենք, թէ ինչ են արել այժմեան հոգաբարձուքը այս դըպրոցի համար տնտեսական կողմանէ.

Հոգաբարձութիւնը, որի անդամները ուղղակի նշանակուած են Վեհափառ Գէորգ Դ. Կաթողիկոսից Կոնդակաւ ի 22 Հոկտեմբերի 1871 ամի համարաւ 213 և որին Նորին Օծութիւնից յանձնուած է կառավարութիւն դպրոցի թէ ուսումնական և թէ տնտեսական մասին, «թողլով թէմական տեսչին նոր կոնդակաւ իւրով ի 26 Դեկտեմբերի 1875 ամի յայսմ դըպրոցի վասն բարեկարգութեանց միայն խորհրդակցութեամբ և հաճութեամբ Նորին, եթէ ունիցի նա որ և իցէ առաջարկութիւն», ստացաւ այս ուսումնարանը, պէտք է ասել, շատ աննախանձելի դրութեան մէջ, որովհետև Խորէն Վարդապետ Ստեփանէն—երբեմն աշխարհական—գլխաւորապէս կառավարումէր դրան աւելի իրա քրտինքով այս տեղ և այն տեղ դասատուութեամբ աշխատած փողերով, քան թէ օրիորդներից ամսական վարձ ստանալով—նա մանաւանդ որ եկեղեցուց մինչ անգամ մէկ կոպէկ ևս չանէր նա *). Ուրեմն—երբ նա թողեց ուսումնարանը և գնաց մտաւ Ս. Էջմիածնայ Միաբանութեան մէջ—դպրոցի դրութիւնը, հասկանալի է, չէր կարող լինել լաւ վիճակի մէջ, որի ապացոյց, ի միջի այլոց, կարող են լինել մի կողմանէ տիրուհի Ղանշեանցի անվճար մնացած տան հասանելու բաւականին վարձը և միւս կողմանէ այն հանգամանքը, որ դպրոցումը վաթսունաչափ օրիորդներից կային մնացած միայն 14 օրիորդ, 1 վարժուհի օր. Փիլիպոսեանը և 1 ուսուցիչ պ. Դիվանեանցը.

Չունենալով ոչ մի դրամական միջոց դպրոցը կառավարելու, որովհետև մի քանի օրիորդաց ամսականը—այն ևս երկու կամ երեք ռուբլի ամիսը—նա մանաւանդ որ աշակերտուհիները մեծ մասամբ ձրի էին ուսանում. վարչութիւնը շարունակումէր բաւականին ժամանակ կառավարել Մարիամեան ուսումնարանը աւելի իրա սեփհական միջոցներով այսինքն իրա գրպանից փող տալով, քան թէ այս և կամ այն աղբիւրներից. Այս միջոցների պակասութեան պատճառաւ էր, որ ես ինքս մէկ տարուց աւելի —և ի հարկէ ձրիաբար. հոգաբարձութեան խնդրանօք ոչ թէ տեսչութիւն եմ արել պ. Գրիգոր Արծրունու դուրս գնալուց յետոյ այս պաշտօնից, այլ և թւաբանութեան դասատու եմ եղել երկրորդ, այն է,

(*) Նոյն իսկ կոնդակաւ թէև յանձնած էր այս հոգաբարձութեանը եւ երկրորդ բաժանումն այն ուսումնարանի, բայց որովհետև շատ հեռու էր մեզնից, լինելով Հաւլաբարում, վասն որոյ կարգադրութեամբ հանգուցեալ վիճակաւոր արքեպիսկոպոսի Ս. Ջալալեան բանաւոր խնդրանօք հոգաբարձութեան յանձնեցաւ առանձին մեզանից անկախ վարչութեանը թեմական տեսուչ Տ. Ստեփան քահանայի ժամանակը այն է չորս տարի յառաջ.

բարձր դասատնում․ կարող էի արդեօ՞ք այս պաշտօնները—մանաւանդ վերջինը կատարել թէ ոչ, ես աւելորդ եմ համարում ապացոյցներ առաջ բերել․ Եւ ինչ մի զարմանք, եթէ Ցարանները իրանց անկրթութեամբ և անվայել սութեամբ մեզ չհաւանին, ասելով որ մենք մինչ անգամ այբ ու բենն ևս չենք գիտի օտարազգի վարժուհի մտցնելով դպրոցումը, երբ որ այս օտարազգին հէնց նոյն իսկ իրանց ժամանակը և իրանց համախոհ մարդկանցից է նրա բերուած առանց գիտութեան հոգաբարձուաց, որոնք մինչև ուսումնական տարւայ լրանալը կամեցան խոհեմութեամբ տանել գործը, տեղիք չտալով նորա արձակմանը նոր նոր անբաւականութիւնների և երբ որ ինքն պ. Ցարան*) թէ գիտութիւնով և թէ միւս ուսումնական պայմաններով բոլորովին բոբիկ է, դուրս գալով Ներսիսեան դպրոցի միայն երկրորդ դասատանից և Փարիզի մի քանի փողոցների ժանտախտ օդը ծծելով․ Վերջապէս ես չգիտեմ ինչ մի յանցանք կայ այս գործի մէջ, եթէ վարժուհին Ռուսաց և կամ մի այլ օտար լեզուի մէջ օրիորդաց վարժելու համար ես, բացի հայերէնում, օտարազգի էր եղել մինչդեռ նա միայն ձեռագործի ուսուցչուհի է, կատարելով մի և նոյն ժամանակ նոյն իսկ առաջեայ վարձով դպրոցի ծախսերի թեթևութեան համար օրապահութիւն և ոչ թէ վարժուհութեան պաշտօնը **)․ Երևումէ, որ պարոնը դեռ ևս այբից էլ չի սկսել իրա ուսումը․ Մեր խօսքը կարճացնելու համար մեզ մնում է միայն կրկնել երևելի Կիկերոնի բառերը․ О хетроча, о течез. (ո՜հ ժամանակք, ո՜հ սովորութիւնք այսինքն բարոյականութիւն)․

Բայց թողնենք մեր ժողովրդի ականջի համար այսպիսի մի անախորժ խօսակցութիւնները և դառնանք դէպի հոգաբարձական տնտեսական հարցը․

Որովհետև այսպիսի պայմաններով այսինքն հոգաբարձական միջոցներով դժուար կլինէր կառավարել ուսումնարանը—իցէ ոմանք նոցանից ևս հրաժարուել էին իրանց պաշտօնից, և որովհետև ձրի դասատուութիւնը ուսուցչաց չէր կարող լինիլ միշտ տևողական—մանաւանդ որ ամենքեանք չեն կարող ունենալ դասեր Ներսիսեան դպրոցումը, ուր կարող լինէին մի նշանաւոր ստացած վարձով ապահովացնել իրանց դրութիւնը, վասն որոյ վարչութիւնը որոշեց առաւել հաստատ միջոցներ որոնել ուսումնարանի վիճակը ապահովացնելու․ Եւ ահա աշխատանօք Հոգաբարձու-

---

(*) Այս այն Ցարանն է, որի համար Արարատ ամսագրումը ասած է յայտնի մարդ է․

(**) Թող ների Պ․ յօդուածագիրը, որ մենք չենք կարող ամենևին հաշտուել իւր կարծիքի հետ․ ընդհակառակն ոչ միայն անօգուտ՝ այլ եւ վտանգաւոր է մատաղահաս օրիորդներին ենթարկել օտարազգի վարժուհւոյ կամ վարժապետի ազդեցութեանը, մանաւանդ Տփխիսու պէս քաղաքում, ուր միայն ձեռագործութիւն սովորեցնող վարժուհիք շատ կարելի է գտնել․ այստեղ սորա պատճառները բացատրել երկար կլինէր․ ինքը թող ողջախոհութեամբ իմաստասիրէ․ Ծ․ Խմբագր․

թեան և մանաւանդ միջնորդութեամբ անդամոյ իւրոյ երէցփոխան Ստեփանեանցի վարչութիւնը կարողացաւ եկեղեցական գումարից մի կողմանէ կառուցանել երկյարկանի տուն ուսումնարանի համար նոյն իսկ Նորաշէն եկեղեցու գաւթումը, որպէս հրամայեալ էր Նորին Վեհափառութիւնը իրա այստեղ լինելու ժամանակը, ունելով մի և նոյն ժամանակ և օժանդակութիւն իրա անդամ Զաքարիայ Թամամշեանցից մինչ հազար ռուբլի, և միւս կողմանէ նշանակել տալ հումանայնութեամբ ժողովրդականաց և հոգևոր կառավարութեան ամիսը յիսուն ռուբլի, Յորդորմամբ հանգուցեալ նախագահի, այն է աւագ քահանայ Տ. Սրապիոն Տ. Մովսէսեանցի, եկեղեցին ստացաւ յօգուտ դպրոցիս և հանգուցեալ Տփխիսու քաղաքացի Սողոմոն Բարսեղեան Ղուլանեանցի կտակաւ Գանձակի Քարվանսարայի չորրորդ մասը, որ այժմս բերումէ ամիսը վաթսուն ռուբլի, Վերջ ի վերջոյ ես ինքս ևս 1877 ամի Յունվարից բացի առաջայ ժամանակ առ ժամանակ տուած օժանդակութիւններից, ինչպէս երևումէ և տեղային Կոնսիստորիայի մատեաններից, տալիս էի իւրաքանչիւր տարի երկու հարիւր վաթսուն երկու ռուբլի քառասուն և չորս կոպ. և այժմս էլ դպրոցի ապահովութեան համար հաստատում եմ Նորաշէն եկեղեցու անուամբ աղիւսից շինած իմ չորս յարկանի տունը Ներքին Սիրաջխանում թուրքի մէյդանի մօտ, ուր և մի օր պարապ չի մնայ նա, և ուր ուրեմն, ուսումնարանը նորա եկամուտը կունենայ միշտ իրր մի անհատ աղբիւր։

Այս տունը, որն որ գնահատած է թէ քաղաքական վարչութիւնից և թէ մեր հոգաբարձութիւնից տասն և վեց հազար ռուբլի և որն որ միայն մասամբ ունի մնացած իրա վերայ Անդրակովկասեան պարտքը, այժմս տարեկան բերումէ հազար հարիւր ռուբլի։ Որովհետև մինչի Կայսերից հրաման ստանալը և թուղթ հաստատելը ես կամեցայ իմ կենդանութեանս մէջ իրագործել այս իմ նուիրատուութիւնը, որի պատճառաւ ամբողջ տունը իրա կրպակներով յանձնեցի — թէ և դեռ ընտանեկան կերպով — Նորաշէն եկեղեցու երիցփոխան Ստեփանեանցին արդէն անցեալ 1879 թուից Յունվար ամսից ի վայելումն եկեղեցու համաձայն թոյլատուութեան Կոնսիստորիայի։ Վասնորոյ Հոգաբարձութիւնը խնդրեց և հոգևոր իշխանութիւնը լուծեց և արդէն ստանումէ նա ևս ամիսը քսան ռուբլի, որ ընդ ամենը ի միասին կառնէ ամսական հարիւր երեսուն ռուբլի։ Այս այն ամսականն է, որ պ. յօդուածագիրը յիշումէ իրա յօդուածի մէջ, ատամները նորիցս կրճտելով, որ էլի մի որ և իցէ ճանապարհով ձեռք գցի գումարը և ինչպէս ասած է, խուրմայի պէս ուտէ փողը, չընայելով ոչ դասերի բացակայութեանը, ոչ տօներին, ոչ և այլն և այլն ծախսերուն և ոչ թէ այլոց, թուլութեան, անհոգութեան, անտարբերութեան և յետադիմութեան ամենայն կողմանէ։

Յիշեալ տան հաստատելը յետ մնաց մինչ ցայսօր այն պատճառաւ, որ Տփխիսու դատարանի աւագ նօտարիուսը պահանջումէր հաստատելու

փողը (այսինքն պօշլինէն пошлины) և մենք այսինքն ես և երիցփոխան Ստեփանեանցը բողոքեցինք այս մասին Օկրուժնոյի դատարանին, որ ի 16 Ապրելի այսր ամի վճռեց արդէն հաստատել թուղթը առանց յիշեալ պահանջմանց—ուստի եկեղեցուն մնաց մինչ 640 ռուբլի օգուտ։

Ի լրումն վերոյիշեալ ասածներիս աւելորդ չեմ համարի յիշել այս տեղ և այն մասին, որ Հոգաբարձութիւնը որոշած է ինչպէս կերևայ և նորա յանուն Վիճակաւորի 18 ն նոյն Ապրելի ուղարկած յայտարարութիւնից ընդ համարաւ 3, կառավարել ուսումնարանը միայն իւր ստացած հաստատումներով, այն է ամսական 130 ռուբլով, և ոչ թէ աւելացնել որ և իցէ գումար օրիորդների վճարմամբ, ինչպէս քարոզում յօդուածագիրը, թէև լինի մեծ յառաջադիմութիւն — նախ՝ զի քանի մի օրիորդներ մեծաւ դժուարութեամբ են վճարում մինչև անգամ մէկ ռուբլի ամիսը, երկրորդ՝ որ բարերարաց տուրքը և ժողովքը ունեն մեծ և մինչ անգամ անտանելի դժուարութիւններ և երրորդ՝ որ աւանդելի առարկայք, որք են. Կրօն, Հայոց և Ռուսաց լեզուք, Թուաբանութիւն, Նկատողական ուսումն, Գրծագրութիւն, Հայրենագիտութիւն, Վայելչագրութիւն, Երգեցողութիւն և Ձեռագործ, և որոնք մատակարարւում օրիորդաց փոխանակ երկու դասատանց այժմ երեք դասատանց մէջ այն է 60 աշակերտուհեաց, առ այժմ յոյժ և յոյժ բաւական են ժողովրդեան էքաւոր դասի զաւակաց համար։

Վարչութիւնը, ծառայեցնելով այս դպրոցը ստորին և առհասարակ էքաւոր ժողովրդեան դասին առանց որ և իցէ վարձի—մինչդեռ մեր միւս օրիորդաց ուսումնարանները դլխաւորապէս և կամ մասնաւորապէս կառավարումեն աշակերտուհիներից ստացած վարձերով և ուրեմն վիճակվումեն նրանք աւելի միջնակարգ, քան թէ ստորին դասին, այսինքն աւելի ունևորաց, քան թէ էքաւորաց, հասաւ այսպիսի եզրակացութեան, այն աչքի առաջ ունեցած դաղափարով, որ եթէ երբեմն տեղւոյս կառավարութիւնը տալիս էր ծնողաց ամսական հինգ ռուբլի, որ սրանք ուղարկեն իրանց որդիքը ուսումնարան, ապա ուրեմն ոչքան առաւել հարկաւոր է մեզ — մանաւանդ այսպիսի ժամանակում, երբ ամեն տեղ բանում են ձրիավարժ օտարազգի դպրոցներ, քաղցրացնել ուսման ճաշակը մեր քաղաքիս էքաւորաց մէջ։

Ահա պարոն ընթերցողներ, բոլոր եղելութեան հանգամանքները մի ըստ միոջէ թէ և շատ կարճապէս։ Այժմ դուք ինքներդ դատեցէք գործի ճշմարտութիւնը։

ԳՐԻԳՈՐ ԻԶՄԻՐԵԱՆՑ։